# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Լենտեքս ՍՊԸ-ն ՀՀ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-23/9/Բ/2/ԻԾ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 4 | Շապիկ տրիկոտաժե (կիսաթև) սև: Շապիկ կիսաթև սև՝ արտադրվում է ուղիղ ձևածքով, կարճաթև, 1մ/ք 160±2% գ, վզամասը մշակված է 2սմ լայնության տրիկոտաժե մանժետով՝ եզրագծված 4-5մմ լայնության կրկնակի զարդակարով: Գործվածքը տրիկոտաժ, ՈՉ գործող սև դաշտային համազգեստի համար, բաղադրությունը՝ բամբակյա, մակերեսային խտությունը՝ 160±2% գրամ: Շապիկի մեջքամասի վերին եզրի կարի տակից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Թևքերի և փեշի եզրերը ներծալված 2սմ լայնքով և եզրագծված 4-5մմ լայնության կրկնակի զարդակարով:Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե արկղերով կամ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, արկղերի (պարկերի) մեջ մինչև 50 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում, պատասխանատու ստորաբաժանման պահանջով, մատակարար կազմակերպությունը յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Չափս - հասակային սանդղակը. 44/2 – 62/6 քանակները՝ ըստ պատվիրատուի պահանջի: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Лентекс в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-23/9/Բ/2/ԻԾ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 4 | |